

Ռ. Հ. Ներսիսյան

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈՇՈՏՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂՈՂԻ ԱՐԵՎԻԿ ԵՎ
ՀԱՍՏԱԿՈՓ ՓՈՓՈԽԱԿՆԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՎՐԱ

Vitis vinifera տեսակին պատկանող խաղողի փոփոխակներն ունեն արական, երկսեռ և ֆռանկցիոնալ իզական ծաղիկներ [1]։ Բարսանյով [2] 1926 թ. առաջին անգամ Խուրվեղը փոփոխակի մեջ հայտնաբերեց նաև իսկական իզական ծաղիկ ունեցող վազեր։

Արական ծաղկի կազմաւթյունը նույնն է, ինչ որ երկսեռ ծաղիկները, միայն այն տարրերով խառն, որ վարսանդը բուդիմենտար է։ Պարզ է, որ այդպիսի ծաղիկ ունեցող վազերը պոտուդ չեն զոյալնում և հանդիսանում են միայն փոշոտիչներ։ Երկսեռ ծաղկի մեջ լավ զարգացած են թե արական և թե իզական օրգանները։ Փոշին ծլունակ է և պոտուդը զոյանում է ինքնափոշոտմամբ։

Ֆունկցիոնալ իզական ծաղիկն ունի լավ զարգացած վարսանդ, սակայն առեւտրերի թելիկները վարսանդի համեմատությամբ կարճ են, ծաղիկը բացվելիս առեւտրերը խեղդում են զեպի ցած, ծաղկափոշին ծլունակ չէ, որի հետևանքով պոտուդ կազմակերպվում է միայն խաչաձև փոշոտման դեպքում [3]։ խաչաձև փոշոտում են պահանջում նաև իսկական իզական ծաղիկ ունեցող փոփոխակները։ Ֆունկցիոնալ իզական ծաղիկ ունեցող փոփոխակների բերքատվությունը կայուն չէ և կախված է փոշոտման պայմաններից։ Այն դեպքում, երբ ծաղկման շրջանում եղանակն անբարենպաստ է փոշոտման համար, տեղի է ունենում զգալի ծաղկավիժում և բերքը չափ ցածր է լինում։

Փոշոտումն ապահովելու համար ֆռանկցիոնալ իզական ծաղիկ ունեցող փոփոխակները տնկում են երկսեռ փոփոխակների հետ խառն, իսկ երբ այդ փոփոխակները համատարած են անկված՝ կիրառում են արհեստական փոշոտում։ Ուրինակ՝ Աղբեջանական ՍՍՌ Կիրովաբադի շրջանում Թավկվերի փոփոխակի համատարած այգիների փոշոտումն ապահովելու համար կատարում են արհեստական փոշոտում վայրի խաղողի ծաղկափոշով [4]։

Մեղրու շրջանում 1945 թվին մեր կատարած ուսումնասիրություններից պարզվեց, որ Արևիկ (Ալադուրա) և Հաստակոթ (Այրդան) տեղական փոփոխակները ունեն ֆռանկցիոնալ իզական ծաղիկ։ Խիտաժամանակ պարզվեց, որ Արևիկը գերակշռող տեղ է զբաղում Մեղրու շրջանի բոլոր այգիներում՝ նրա տարածվածությունը հասնում է 95—98% -ի (բաղաաությամբ Ալադուրա գյուղից, որտեղ Արևիկը 70—75% է կազմում), իսկ Մոպամ 2—5% -ի մեծ մասը կազմում է Հաստակոթի Այգիներում համախալի տեղի է ունենում ուժեղ ծաղկավիժում, նումանավանդ այն տարիներին, երբ ծաղկման շրջանում եղանակն անբարենպաստ է։ Արևիկ փոփոխակի ողկույղների մեջ հանդիպում ենք մեծ քանակությամբ մանր պարթենոկարպային պտուղներ։

Պարզելով այս, անհրաժեշտ էր ուսումնասիրել Արևիկի և Հաստակոթի փոփոխականների փոշոտման և պարզակալման պայմանները, որի համար 1945 թվին Մեղրի գյուղի կոլանտեսություն № 1 բրիգադայում դրեցինք համապատասխան փորձեր:

Առաջին խնդիրը, որն անհրաժեշտ էր պարզել, այդ՝ Արևիկի և Հաստակոթի փոփոխականների ծաղկափռու ծլուհատությունն էր: Այդ որոշելու համար ծաղկափռին փորձեցինք ձևեցնել շաքարի 10%-ով լուծույթում: Որպես կոնտրոլ ծառայեցին, նույն շրջանում տարածված երկսեռ ծաղիկ ունեցող փոփոխականներից Այդարայի, Ճահաղու և վայրի վիճակում աճած արական ծաղիկ ունեցող վազերի ծաղկափռին: Պարզվեց, որ Արևիկի և Հաստակոթի փոփոխականների ծաղկափռին ծլուհատի չէ:

Բնական պայմաններում Արևիկի և Հաստակոթի ծաղկափռու ծլուհատությունը պարզելու համար սկսած 1945 թվից մինչև 1947 թիվը յուրաքանչյուր տարի վերը նշված սորոսներից 25-ական ծաղկափթթուկ լուծույթում են մեկուսիչներին մեջ: Բերքի կադմակերպումից հետո կատարված ստուգումներից պարզվեց, որ մեկուսիչներում եղած բոլոր ծաղկափթթուկ լուծույթումները չորացել են և հուլյնիակ պարթիենոկարպային պտուղներ չեն կադմակերպել, որը հատուկ է ֆունկցիոնայ իդական ծաղիկ ունեցող սորո փոփոխականներին:

Նույն փոփոխակի սահմաններում խաչաձև փռոտման տեղայնությունը պարզելու համար մեկուսիչների մեջ ենք վերցրել Արևիկի և Հաստակոթի փոփոխականներից 10-ական ծաղկափթթուկ լուծույթում և այն փռոտել նույն փոփոխականների (նախօրոք նույնպես մեկուսիչների մեջ վերցված) ծաղկափռով:

Ստուգումից պարզվեց, որ այս դեպքում ևս բոլոր ծաղկափթթուկ լուծույթները չորացել են:

Արհեստական լրացուցիչ փռոտման ազդեցությունը բերքի կադմակերպման և քանակի վրա պարզելու համար ծաղկման շրջանում Հաստակոթի և Արևիկի փոփոխականների վազերի վրա ռատոնձնադրել ենք 50-ական ծաղկափթթուկ լուծույթում, որոնցից 25-ական փռոտել ենք արական ծաղիկ ունեցող վայրի վազի ծաղկափռով, առանց մեկուսացնելու, իսկ 25-ական ծաղկափռու թողել ենք որպես կոնտրոլ՝ բնական ճանապարհով ազատ փռոտվելու համար: Ստորև բերում ենք այդ փռոտման աբդյուսները (տես աղյուսակ 1):

Ինչպես երևում է աղյուսակից, Արևիկի լրացուցիչ փռոտումից ստացված ողկույղներն անհամեմատ ավելի մեծ են, քան կոնտրոլները: Նրանց միջին կշիռը 497,6 գր է, տատանումը՝ 148,0—551,0 գր, մինչդեռ կոնտրոլ ողկույղների միջին կշիռը կազմում է 246,0 գր, իսկ տատանումը՝ 83,5—508,0 գր: Այսպիսով լրացուցիչ փռոտումից ստացված ողկույղների բերքը կոնտրոլ ողկույղների համեմատությամբ հավասար է 200,7% (նկ. 1):


Համեմատաբար փոքր արդյունք է ստացվել Հաստակոթի լրացուցիչ փռոտումից: Հաստակոթի լրացուցիչ փռոտումից ստացված ողկույղների միջին կշիռը կազմում է 265,8 գր, տատանումը՝ 127,0—437,5 գր, մինչդեռ կոնտրոլ ողկույղների միջին կշիռը 201,0 գր է, իսկ տատանումը՝ 88,0—363,5 գր: Այսպիսով Հաստակոթի լրացուցիչ փռոտումից ստացված ողկույղների բերքը կոնտրոլ ողկույղների համեմատությամբ հավասար է 132,2%: Ստացված ցածր արդյունքը բացատրվում է նրանով, որ Հաստակոթի


Աղյուսակ I

Ողկույթ №	Ո Ղ Կ Ս Լ Յ Ղ Ի Կ Ձ Ի Ռ Ր Ղ Ր			
	Ո Ր Ե Ի Կ		Հ ա ս տ ա Կ ո թ	
	Փոշոտված	Կոնտրոլ	Փոշոտված	Կոնտրոլ
1	247,0	83,5	200,5	247,0
2	663,5	357,0	249,0	182,0
3	470,0	112,0	292,0	136,0
4	672,5	209,5	369,0	168,0
5	468,5	276,0	370,5	113,0
6	646,0	84,5	319,0	115,5
7	518,0	372,0	343,5	123,0
8	767,0	84,5	437,5	259,5
9	534,0	298,0	326,5	160,5
10	758,0	225,5	314,0	223,0
11	851,0	158,0	295,0	330,0
12	614,0	227,5	199,0	302,0
13	486,0	268,0	223,5	210,0
14	231,0	508,0	127,0	88,0
15	178,0	261,0	142,0	286,0
16	148,0	472,0	223,5	184,0
17	255,0	120,0	280,0	158,0
18	449,0	208,5	247,0	201,0
19	—	—	152,0	302,5
20	—	—	226,0	363,5
21	—	—	247,0	135,0
22	—	—	—	142,0
23	—	—	—	189,0
Ընդամենը	8956,5	4325,5	5583,5	4622,5
1 ողկույթի միջին հշիսը	497,6	240,3	265,8	201,0

ավելի շուտ է ծաղկում, քան Արևիկը: Այդ ժամանակ ծաղկում են շրջանի ուղիներում տարածված երկսեռ ծաղիկ ունեցող մի քանի փոփոխակներ, որոնք մասամբ ապահովում են Հաստակոթի փոշատումը, մինչդեռ Արևիկի ծաղկման ժամանակ այդ փոփոխակներն արդեն պտուղ են կազմում և չեն կարող որպես փոշոտիչ ծառայել (նկար 2):

Լրացուցիչ փոշոտման հետևանքով պղույթների մեխանիկական և քիմիական կազմութան մեջ տեղի ունեցած փոփոխությունները պարզելու նպատակադրված է Արևիկ և Հաստակոթի փոփոխակների փոշոտված և կոնտրոլ ողկույթների մեխանիկական և քիմիական անալիզը: Արևիկի և Հաստակոթի ողկույթների մեխանիկական անալիզի տվյալները բերում ենք 2-րդ աղյուսակում:





Նկար 2. Հատմանովի վերին շտրիկ—լուսնուցիկ մեղմամբ տղիս քիւնիւր Ներքին շտրիկ—հոնաբոլի

Ինչպես երևում է աղյուսակի սովախներից, Արևիկի լրացուցիչ փոշոտումից ստացված ողկույզների պտուղները քանակը կրկնակի է, բայց նրանց մեծությունը կոնտրոլի պտուղներից համարյա թե չի տարբերվում: 100 պտղի երկարությունը և լայնությունը համեմատելով պատկերներն են ներկայացնում:

Լրացուցիչ փոշոտումից ստացված պտուղներ		կոնտրոլ պտուղներ	
Երկարությունը	Լայնությունը	Երկարությունը	Լայնությունը
18,70 մմ	18,35 մմ	18,90 մմ	18,30 մմ

Միաժամանակ 2 աղյուսակից երևում է, որ Արևիկի լրացուցիչ փոշոտված և կոնտրոլ ողկույզների մեխանիկական կազմի մեջ զգալի տարբերություն չկա: Որոշ տարբերություն կա Արևիկի լրացուցիչ փոշոտումից ստացված և կոնտրոլ ողկույզների քաղցուի քիմիական բաղադրության մեջ, 1947 թվի սեպտեմբերի 1-ին կատարված քաղցուի անալիզը հետևյալն է ցույց ապրիս:

Լրացուցիչ փոշոտված		կոնտրոլ	
Շաքար	Թթվություն	Շաքար	Թթվություն
18,70%	4,950%	21,00%	5,470%

Հաստակոթի ողկույզների մեխանիկական անալիզը համարյա նույն պատկերն ունի, ինչ որ Արևիկինը: այստեղ ևս լրացուցիչ փոշոտումից ստացված և կոնտրոլի ողկույզների մեխանիկական կազմի մեջ զգալի տարբերություն չկա: Չնայած լրացուցիչ փոշոտումից ստացված ողկույզների մեջ պտուղների քանակը միջին հաշվով միայն 12-ով է ավելի կոնտրոլի ողկույզների պտուղներից, բայց և այնպես փոշոտված պտուղներն ավելի մեծ են, քան կոնտրոլի պտուղները: Հաստակոթի 100 պտղի երկարությունը և լայնությունը միջին չափերը հետևյալն են:


Լրացուցիչ փոշոտումից ստացված պտուղներ		կոնտրոլ պտուղներ	
Երկարությունը	Լայնությունը	Երկարությունը	Լայնությունը
18,1 մմ	16,1 մմ	17,8 մմ	15,6 մմ

Որոշ տարբերություն է նկատվում Հաստակոթի լրացուցիչ փոշոտումից ստացված և կոնտրոլի ողկույզների քաղցուի քիմիական բաղադրության մեջ: 1947 թ. սեպտեմբերի 4-ին կատարված քաղցուի անալիզը հետևյալն է ցույց տալիս:

Աղյուսակ 4

Արևիկ փոփոխակի իրացուցիչ փոշուժանով ստացված և կոնսերվ վազերի
ոչկույզների մեծությունը

Ձևի ընդ	Հրացուցիչ փոշուժանով						Կոնսերվ					
	Մեծ վազի կույզների քանակը	Ուրիշ					Մեծ վազի կույզների քանակը	Ուրիշ				
		100- 150 զր	100- 200 զր	200- 300 զր	300- 500 զր	500 զր ավելի		100 զր	100- 200 զր	200- 300 զր	300- 500 զր	500 զր ավելի
1	30	1	5	4	7	13	28	12	10	2	4	—
2	18	—	3	4	5	6	13	5	3	—	4	1
3	11	—	2	4	4	1	18	10	6	1	1	—
4	28	1	5	6	9	7	8	—	5	3	—	—
5	23	—	3	5	9	6	18	3	8	4	2	1
6	24	—	3	2	14	5	14	4	4	4	1	1
7	16	1	4	3	6	2	15	3	4	2	4	2
8	17	1	5	5	5	1	15	3	6	4	1	1
9	14	1	3	2	5	3	17	8	4	4	1	—
10	35	3	8	6	11	7	15	1	9	4	1	—
11	17	2	6	6	3	—	—	—	—	—	—	—
12	15	—	1	3	7	4	—	—	—	—	—	—
13	12	—	1	1	8	2	—	—	—	—	—	—
14	21	2	1	7	8	3	—	—	—	—	—	—
15	17	1	1	2	6	7	—	—	—	—	—	—
16	7	—	4	3	1	9	—	—	—	—	—	—
17	14	1	2	2	4	5	—	—	—	—	—	—
18	26	1	6	8	9	2	—	—	—	—	—	—
19	10	1	4	—	2	3	—	—	—	—	—	—
20	16	1	1	4	4	3	—	—	—	—	—	—
21	13	2	2	4	3	2	—	—	—	—	—	—
22	22	2	4	7	7	2	—	—	—	—	—	—
23	17	1	3	2	4	7	—	—	—	—	—	—
Ընդամ. Տոկոսը	433	22 5,1	80 18,4	90 20,9	141 32,5	100 23,1	161	49 30,4	59 36,6	28 17,3	19 11,8	6 3,8



Նկար 3. Արեւիկ, Վերին մ—լրացուցիչ փոշոտում ստացած վաղ
Ներքին մ—կոնսերվ:

Ընդհանուր հարկերի և արտադրության հարկերի ընդհանուր գումարը 1920 թվականին հասել է 1,000,000,000 ռուբլի, իսկ 1921 թվականին՝ 1,200,000,000 ռուբլի։ Այսպիսով, հարկերի ընդհանուր գումարը 1921 թվականին ավելացել է 200,000,000 ռուբլի, կամ 20%։

Հարկերի ընդհանուր գումարի մեծացումը պայմանավորված է հարկային օրենսդրության փոփոխությամբ, որով հարկերի դրույթը ավելացել է 20%։

Հարկերի ընդհանուր գումարի մեծացումը պայմանավորված է նաև տնտեսական կյանքի ակտիվացմամբ, որով արտադրության և առևտրի ծավալները ավելացել են։

Երևան

Տարի	Հարկերի ընդհանուր գումարը	Հարկերի միջին արժեքը
1920	1,000,000,000	1,000,000,000
1921	1,200,000,000	1,200,000,000

Տարի	Հարկերի ընդհանուր գումարը	Հարկերի միջին արժեքը
1920	1,000,000,000	1,000,000,000
1921	1,200,000,000	1,200,000,000
1922	1,400,000,000	1,400,000,000
1923	1,600,000,000	1,600,000,000
1924	1,800,000,000	1,800,000,000
1925	2,000,000,000	2,000,000,000
1926	2,200,000,000	2,200,000,000
1927	2,400,000,000	2,400,000,000
1928	2,600,000,000	2,600,000,000
1929	2,800,000,000	2,800,000,000
1930	3,000,000,000	3,000,000,000
1931	3,200,000,000	3,200,000,000
1932	3,400,000,000	3,400,000,000
1933	3,600,000,000	3,600,000,000
1934	3,800,000,000	3,800,000,000
1935	4,000,000,000	4,000,000,000
1936	4,200,000,000	4,200,000,000
1937	4,400,000,000	4,400,000,000
1938	4,600,000,000	4,600,000,000
1939	4,800,000,000	4,800,000,000
1940	5,000,000,000	5,000,000,000
1941	5,200,000,000	5,200,000,000
1942	5,400,000,000	5,400,000,000
1943	5,600,000,000	5,600,000,000
1944	5,800,000,000	5,800,000,000
1945	6,000,000,000	6,000,000,000
1946	6,200,000,000	6,200,000,000
1947	6,400,000,000	6,400,000,000
1948	6,600,000,000	6,600,000,000
1949	6,800,000,000	6,800,000,000
1950	7,000,000,000	7,000,000,000
1951	7,200,000,000	7,200,000,000
1952	7,400,000,000	7,400,000,000
1953	7,600,000,000	7,600,000,000
1954	7,800,000,000	7,800,000,000
1955	8,000,000,000	8,000,000,000
1956	8,200,000,000	8,200,000,000
1957	8,400,000,000	8,400,000,000
1958	8,600,000,000	8,600,000,000
1959	8,800,000,000	8,800,000,000
1960	9,000,000,000	9,000,000,000
1961	9,200,000,000	9,200,000,000
1962	9,400,000,000	9,400,000,000
1963	9,600,000,000	9,600,000,000
1964	9,800,000,000	9,800,000,000
1965	10,000,000,000	10,000,000,000
1966	10,200,000,000	10,200,000,000
1967	10,400,000,000	10,400,000,000
1968	10,600,000,000	10,600,000,000
1969	10,800,000,000	10,800,000,000
1970	11,000,000,000	11,000,000,000
1971	11,200,000,000	11,200,000,000
1972	11,400,000,000	11,400,000,000
1973	11,600,000,000	11,600,000,000
1974	11,800,000,000	11,800,000,000
1975	12,000,000,000	12,000,000,000
1976	12,200,000,000	12,200,000,000
1977	12,400,000,000	12,400,000,000
1978	12,600,000,000	12,600,000,000
1979	12,800,000,000	12,800,000,000
1980	13,000,000,000	13,000,000,000
1981	13,200,000,000	13,200,000,000
1982	13,400,000,000	13,400,000,000
1983	13,600,000,000	13,600,000,000
1984	13,800,000,000	13,800,000,000
1985	14,000,000,000	14,000,000,000
1986	14,200,000,000	14,200,000,000
1987	14,400,000,000	14,400,000,000
1988	14,600,000,000	14,600,000,000
1989	14,800,000,000	14,800,000,000
1990	15,000,000,000	15,000,000,000
1991	15,200,000,000	15,200,000,000
1992	15,400,000,000	15,400,000,000
1993	15,600,000,000	15,600,000,000
1994	15,800,000,000	15,800,000,000
1995	16,000,000,000	16,000,000,000
1996	16,200,000,000	16,200,000,000
1997	16,400,000,000	16,400,000,000
1998	16,600,000,000	16,600,000,000
1999	16,800,000,000	16,800,000,000
2000	17,000,000,000	17,000,000,000

Ընդհանուր հարկերի և արտադրության հարկերի ընդհանուր գումարը 1920 թվականին հասել է 1,000,000,000 ռուբլի, իսկ 1921 թվականին՝ 1,200,000,000 ռուբլի։

Ազդեցությունը երևում է, որ Արևիկի և Հաստակոթի լրացուցիչ փոշոտում ստացած վաղերի բերքատվությունը նկատմամբ դոյուսթյուն սննի նույն օրինաչափությունը, ինչ որ լրացուցիչ փոշոտված սղիւլդներինը. այն ժամանակ, երբ Արևիկի բերքատվությունը կոնսերվի հետ համեմատած ավելացել է 136,6% -ով, Հաստակոթինն ավելացել է միայն 38,4% -ով (նկար 4)։ Ստացված տվյալներն տնվիճելիորեն ապացուցում են, որ Արևիկ և Հաստակոթ փոփոխակները Մեղրու շրջանում պետք է ապահովել պահանջված քանակի փոշոտիչ փոփոխակներով։

Մեղրու շրջանում տարածված փոփոխակներից որպես փոշոտիչ ամենից նպատակահարմար Ալիդարա փոփոխակն է, որի ծաղկումն բոս մեր 3 տարվա դիտողությունների, համընկնում է հիմնական ստանդարտային փոփոխակ հանդիսացող Արևիկի ծաղկման հետ կամ ծաղկում է նրանից 1—2 օր ուշ։

Միաժամանակ Հաստակոթի փոշոտումն ապահովելու համար անհրաժեշտ է այգիների շուրջը տնկել արական ծաղիկ ունեցող վայրի վաղեր, որոնք ունեն մեծ քանակությամբ փռի, և նրանց բարձրացնել ծառերի վրա, քանի որ նրանց ծաղկումը նույնպես համընկնում է Հաստակոթի ծաղկման հետ։

Այսպիսով Մեղրու շրջանի այգիներում Արևիկ և Հաստակոթ փոփոխակների լրիվ փոշոտումն ապահովելու և նրանցից բարձր բերք ստանալու համար անհրաժեշտ է.

ա) այգիների բոլոր բաց տեղերը տնկիների կամ անպալիսի միջոցով լրացնել Ալիդարա փոփոխակով.

բ) թուփ և շարքից դուրս եկած վաղերը կտնդ տնկել և նրանց վրա պատվաստել Ալիդարա փոփոխակը.

գ) այգիների շուրջը տնկել արական ծաղիկ ունեցող վայրի վաղեր և նրանց բարձրացնել ծառերի վրա, որպեսզի ծաղկման շրջանում ծաղկափռին լրիվ կերպով տարածվի այգիների վրա.

դ) 20—25° Արևիկ փոփոխակի վաղերի բնի վրա ճյուղոտապատվաստ կատարել (Կադիյակի կամ Գալարի ձևով), առանց նախօրոք կտնդ տնկելու և կտնդ տնկել, երբ պատվաստն արդեն բերքատու է դառնում.

ե) նոր տնկվող այգիներում տնկել հերթականությամբ 2 շարք Արևիկ կամ Հաստակոթ փոփոխակ և մեկ շարք Ալիդարա կամ որևէ ուրիշ փոշոտիչ։

Հայկական ՍՍԽ Դիտությունների Եկագնաժայռի

Ստացվել է 12 VІ 1945

Գիտնոգրություն և Թաղողագործություն

Ինստիտուտ

Գ. Բ. Ե. Կ. Ա. Ն. ՈՒԹ. Յ. ՈՒՆ.

1. Emerich Rathag—Die Geschlechtverhältnisse der Reben und ihre Bedeutung für den Weinbau, Wien, 2 Theil, 1888—1899.
2. Баранов П.—Истинный женский цветок винограда. Ташкент, 1927.
3. Коржинский С. И.—Ампелография Крыма. С.—Петербург, 1904.
4. Башинджазизли С. З.—Материалы по изучению виноградного хозяйства Азербайджана. Баку, 1930.

Р. А. Ергесян

Влияние дополнительного опыления винограда сортов Аревик и Астакот на поднятие урожайности

Резюме

Нашими исследованиями в Мегринском районе Армянской ССР в 1945 г. выявлен интересный факт: самый распространенный в районе сорт винограда—Аревик (Алагура), занимающий 95—98% площади всех виноградных насаждений (за исключением сел. Алдара, где он занимает 70—75% общей площади), а также сорт Астакот (Анбоган), составляющий большую часть оставшихся 2—5% насаждений, имеют функционально женский цветок.

В целях выяснения условий опыления и завязывания плодов этих двух сортов в 1945—1947 г. г. нами были поставлены соответствующие опыты, давшие следующие результаты:

а) пыльца сортов Аревик и Астакот в 10% сахарном растворе не дает ростков, между тем как пыльца обоеполых аборигенных сортов Алидара и Чраки, а также мужского цветка дикорастущей лозы в том же растворе, в тех же условиях, дала ростки.

б) Изолированные в пергаментных мешках соцветия Аревик и Астакот целиком засохли, не давши даже партенокарпических плодов.

в) Взятые в изоляторы соцветия Аревик и Астакот и опыленные пыльцей тех же сортов, но с других кустов, также целиком засохли.

г) Соцветия Аревик и Астакот, дополнительно опыленные пыльцой мужских цветов дикорастущей лозы, дали грозди со средним весом: Аревик 497,6 г (148,0—851,0 г), Астакот 265,8 г (127,0—497,5 г), в то время как контрольные при свободном опылении дали грозди соответственно: в 265,8 (83,0—508,0) и 201,0 г (88,0—383,5 г) (см. табл. 1).

д) Число ягод опыленных гроздей Аревик вдвое больше контрольных, но их величины одинаковы: средняя длина 100 ягод от опыленных гроздей 18,70 мм, ср. ширина 18,35 мм, средняя же длина 100 ягод от контрольных гроздей 18,90 мм, а средняя их ширина — 18,30 мм.

Соответственные данные получены и для Астакот:

Средняя длина и ширина
опыленных ягод
18,1 мм—16,1 мм

Средняя длина и ширина
контрольных ягод
17,8 мм—15,6 мм

Наблюдается некоторая разница в химическом составе ягод опыленных и контрольных гроздей. Так:

Сахаристость		Общая кислотность	
Опыленных	контрольных	Опыленных	контрольных
Аревик 18,7%	21,0%	4,95%	5,47%
Астакот 18,8%	20,1%	6,25%	5,92%

е) Число семян в ягодах опыленных гроздей больше, чем в контрольных, причем в первом случае преобладают ягоды с 2—3, во втором—с 1—2 семенами.

ж) Все соцветия кустов дополнительно опыленные в природных условиях пылью мужских цветков дикорастущей лозы сравнительно с контрольными, т. е. с соцветиями кустов свободно опыленных, дали в среднем больше урожая: Аревик—на 136,6%, а Астакот—на 38,4%, причем при дополнительном опылении преобладают грозди весом выше 300 гр, а в контроле с весом до 100—200 гр.

Таким образом, для обеспечения опыления сортов Аревик и Астакот, составляющих вместе 97—99% всех виноградных насаждений Мегринского района, необходимо:

1. Во всех виноградниках района вместо недостающих кустов посадить или отводить сорт Алидара, цветение которого совпадает с цветением Аревик, или опаздывает на 1—2 дня.

2. Ослабленные кусты в виноградниках срезать на черную головку и привить к ним сорт Алидара.

3. Вокруг виноградников посадить дикорастущие лозы, имеющие мужские цветки и поднять их на высокие деревья, дабы во время цветения пыльца распределилась по всем виноградникам.

4. На 20—25% Аревик произвести прививку Кадиляка или Гальяра.

5. В новых виноградных насаждениях через каждые 2 ряда Аревик или Астакот посадить один ряд Алидара или любой соответствующий опылитель.